

**ԱՆԺԵԼԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ**

ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության 1-ին կարգի մասնագետ,  
ՔՀԾ 1-ին դասի կրտսեր ծառայող

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ամբիոնի, միջազգային  
հարաբերությունների բաժնի, միջազգային հարաբերությունների և  
դիվանագիտության ամբիոնի մագիստրոս



## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՍԱՔԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԸ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի հարաբերությունները Իրանի հետ կարևորվում են տարածաշրջանում քաղաքական և տնտեսական կայունության պահպանման առումով: Տնտեսական, ռազմական, մշակութային մեծ ներուժ ունեցող Իրանը կարևոր դերակատարներից է տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության ձևափորման գործում: Հայաստանը կարևորում է Իրանի ներգրավածությունը Հարավային Կովկասի հիմնախնդիրների լուծման գործում և այն դիմում է որպես Հարավային Կովկասում կայունության պահպանման գործուներից մեզը: Իրանը, լինելով Լեռնային Ղարաբաղին սահմանակից պետություն, Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման գործընթացում վարում է հավասարակշռված քաղաքականություն: Իրանում հայկական համայնքի նկատմամբ ձևավորված դրական վերաբերմունքը հավելյալ նպաստավոր պայման է ստեղծում հայ-իրանական միջակետական հարաբերությունների զարգացման համար: Գտնվելով քրիստոնեական և իսլամական քաղաքակրթությունների սահմանագծում՝ Հայաստանը կարող է դերակատարություն ունենալ Իրան-Արևմուտք լարվածության մեղմացման առումով՝ տալով քաղաքակրթությունների երկխոսության և համակցության օրինակ:

**Հիմնարարեր՝ համագործակցություն, ռազմադարարական, միջուկային ծրագիր, պատժամիջոց, համայնք, Ղարաբաղյան հակամարտություն, հոլովագիր, Պաշտպանության նախարարություն, ռմբակում, տեղեկատվություն, արամագործական շրջափակում:**

Հայաստանի Հանրապետության (այսուհետև՝ Հայաստան) անկախացումից հետո Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետև՝ Իրան) հետ աստիճանաբար սկսեցին հաստատվել սերտ բարիդրացիական հարաբերություններ բոլոր բնագավառներում: Արդյունավետ համագործակցություն ծավալվեց եներգետիկայի, տրանսպորտի, բնապահպանության, առողջապահության, գյուղատնտեսության, գիտության, կրթության, մշակույթի բնագավառներում, ինչպես նաև միջմարզային գործակցության ոլորտում: Ակսեցին կյանքի կոչվել ռազմավարական բնույթի նախագծեր: 1991 թվականի դեկտեմբերի 25-ին Իրանը պաշտոնապես ճանաչեց Հայաստանի անկախությունը: 1992 թվականի փետրվարի 9-ին Թեհրանում Հայաստանի և Իրանի միջև ստորագրվեց հոչակագիր դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին. նույն օրը Իրանի և Հայաստանի միջև հոչակագիր ստորագրվեց հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին, որով կողմերը հաստատում էին բարիդրացիական հարաբերություններ հաստատելու իրենց մտադրությունը: 1992 թվականի ապրիլին Երևանում հիմնվեց Իրանի դեսպանատունը, իսկ նույն թվականի դեկտեմ-

բերին Թեհրանում՝ Հայաստանի դեսպանատունը: Դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց ի վեր Հայաստանի և Իրանի միջև կնքվել է ավելի քան 70 փաստաթուղթ, Հայաստանից ավելի քան 60 պաշտոնական այց է կատարվել Իրան, իսկ Իրանից՝ ավելի քան 20: Հայաստանի անվտանգության համակարգում քաղաքական, տնտեսական և հաղորդակցային տեսանկյունից կարևոր նշանակություն է տրվում Իրանի հետ համագործակցությանը<sup>2</sup>: Իր հերթին Իրանը Հարավ կովկասյան տարածաշրջանում վարած քաղաքականությունում կարևոր նշանակություն է տալիս Հայաստանի հետ հարաբերություններին<sup>3</sup>:

Հայ-Իրանական փոխահավետ համագործակցությունը, որը վերջին տարիներին հաճախ բնութագրվում է որպես ռազմավարական, պայմանավորված է մի շարք գործուներով: Թեև պատմականորեն առկա էին որոշակի խնդիրներ, 1990-ականների սկզբին ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը թելադրեց Հայ-Իրանական մերձեցում: Այդ մերձեցմանը մեծապես նպաստեց Կովկասի և Մերձավոր Արևելքի տարածաշրջանում մեծ պետությունների շահերի բախումը և նրանց վարած քաղաքականությունը, Հարավային

Կովկասում ուժերի նոր հարաբերակցության ձևավորումը, բոլորական գործոնը, Իրանի ներքին զարգացումները, որոնք կարող էին հանգեցնել այդ երկիր քաղաքական ուղեգծի փոփոխմանը, Իրանի հարցում Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Եվրամիության և Չինաստանի ժողովրդական Հանրապետության հավանական համաձայնությունը և ճեղարկվելիք քայլերը: Իրանի նկատմամբ Հայաստանի անվտանգության ռազմավարության դրույթների մշակման ժամանակ հարկ է մշտապես ուշադրության կենտրոնում պահել այն հանգամանքը, որ Հայ-Իրանական հարաբերությունների վրա ազդում են Հայաստանի հարաբերությունները այլ պետությունների, առաջին հերթին՝ Թուրքիայի, Ռուսաստանի Դաշնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ, և դրանց հավանական զարգացումները: Հայ-Իրանական հարաբերություններում առանձնահատուկ դեր է խաղում աղքածանական գործոնը, որը Իրանը դիտում է, որպես ավելի համապարփակ՝ բյուրքական գործոնի քաղկացուցիչ մաս, իր տարածքային ամբողջականության և ներքին կայունության պահպանան համար որոշակի սպառնալիք պարունակող գործոն։<sup>4</sup>

1990-ականներին ԽՍՀՄ-ի վիլուգումից հետո Կովկասի և Միջին Ասիայի տարածաշրջանում ստեղծվեց քաղաքական վակուում, որը Թուրքիան և Իրանը ձգտում էին լրացնել՝ ներմուծելով զարգացման համապատասխան երկու՝ բոլորական և իրանական, մողելը Արևմուտքի համար ակնհայտ սպառնալիք էր, իսկ աշխարհիկ պետության բոլորական մողելը ավելի գրավիչ էր, ինչով և պայմանավորված էր Արևմուտքի կողմից Թուրքիային ցուցաբերած ակտիվ աջակցությունը: 1979 թվականի իսլամական հեղափոխությունից հետո Իրանը իր արտաքին քաղաքականության մեջ որդեգրեց իսլամական հեղափոխության, արտահանման քաղաքականությունը, ինչը մեծ վտանգ էր ներկայացնում Արևմուտքի և Ռուսաստանի Դաշնության համար: ԱՄՆ-ն և Եվրոպական պետությունները այդ շրջանում քարոզում էին հետադիմական, արմատական Իրանի պատկերը և ճնշում գործադրում Կովկասյան և Միջինասիական նորանկախ պետությունների վրա՝ կոչ ամելով գերծ մնալ Իրանի հետ կապերի խորացումից: Քրիստոնյա Հայաստանի հետ հարաբերությունները Իրանի համար Արևմուտքի քարոզությանը հակազդելու լավագույն գործիքն էր: Իրանը քաղմից շեշտել է, որ իր հարաբերությունները քրիստոնյա Հայաստանի հետ ավելի բարձր մակարդակում են գտնվում, քան մահմեդական՝ իսլամի նույն շիա դպանանքին պատկանող

Աղքածանի հետ հարաբերությունները: Հայաստանի համար Իրանի հետ հարաբերությունները նույնպես մեծ կարևորություն են ներկայացնում. դրանք, բացի տնտեսական և հաղորդակցային կապի ապահովումից, Հայաստանին բույլատրում են կանխել հայ-աղքածանական հակամարտությունը՝ որպես կրոնական՝ քրիստոնեական-մահմեդական պայքար ներկայացնելու՝ Աղքածանի փորձները: 1990-ականներին Իրանի համար Հայաստանի հետ հարաբերությունների խորացումը խթանելու մյուս պատճառը ուժեղացող բյուրքական կամ պանթյուրքական գործոնն էր: Իրանի տարածքային ամբողջականության դեմ ուղղված հիմնական սպառնալիքներից էին 1946 թվականին նրա հյուսիսում Խորհրդային Միության աջակցությամբ ստեղծված Հարավային Աղքածանի Հանրապետության վերականգնած գաղափարը և այդ նպատակով գործադրվող ջանքերը: Աղքածանի Հանրապետության անկախացումից և, հատկապես, Էլչիբեյի իշխանության գալուց հետո Հարավային Աղքածանի հիմնահարցի բարձրացումը և միասնական մեծ բոլորական պետության ստեղծման գաղափարը մեծապես անհանգույցը Իրանի դեկավարությանը: Իրանը, Ղարաբաղյան հակամարտության սկզբնական փուլում աջակցելով Հայաստանին, ձգտում էր բոլորական՝ Աղքածանի Հանրապետությանը՝ նրա ուշադրությունը շեղելով Հարավային Աղքածանի խնդրից: Հայաստանի համար Թուրքիայի և Աղքածանի շրջափակման պայմաններում Իրանի հետ հարաբերությունները մեծ կարևորություն են ներկայացնում՝ հաղորդակցության և տնտեսական առումներով։ Այս երկու հանգամանքի կարևորությունը ակնհայտ դարձավ 2008 թվականին՝ ոռու-վրացական պատերազմի պատճառով Վրաստանով անցնող ճանապարհի փակման ժամանակ: Հայ-Իրանական հարաբերությունները Հարավային Կովկասում որոշակի հակակշիռ են ստեղծում թուրք-աղքածանական դաշինքին և հնարավորություն են ընձեռնում չեզոքացնել հակահայկական ջանքերը: Միաժամանակ Իրանի հետ տարբեր բնագավառներում համագործակցության հետագա զարգացման վրա ազդեցություն են գործում Իրան-ԱՄՆ-ԵՄ լարված հարաբերությունները և Իրանի Իսլամական Հանրապետության նկատմամբ կիրավող պատժամիջոցները: Հաշվի առնելով Իրանի արմատական հակասությունները Թուրքիայի և Աղքածանի հետ՝ Իրանի հետ հարաբերությունները Հայաստանի համար կարևորվում են տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության և կայունության պահպանման ընդհանուր ձգտմամբ:

Իրանը Լեռնային Ղարաբաղյան ամենամոտ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գտնվող երկիրն է և հակամարտության հարցում միշտ ցուցաբերել է անկողմնակալ և հավասարակշռված դիրքորոշում՝ արժանանալով Աղքեցանի պաշտոնական մեղադրանքներին։ Աղքեցանը բազմից ջանացել է Ղարաբաղյան հակամարտությունում Իրանին Հայաստանի դեմ տրամադրել և հակամարտությունը կրոնական լույսի ներքո ներկայացնել։ Դա է վկայում 2016 թվականի ապրիլին՝ քառօրյա պատերազմի ընթացքում, Իրանի Արևելյան Ատրպատականի նահանգապետի տեղակալ Շարեստարի հայտարարությունը և դրան հաջորդած աղքեցանական լրատվամիջոցներով շահարկվող լուրը այն մասին, իբրև արցախյան ուժերի կողմից հրետակոծության հետևանքով Արևելյան Ատրպատական նահանգի Վերին Կոլիքեզու գյուղում կան վիրավորներ և ավերածություն։ Աղքեցանի կողմից այս սաղրանքը հաջողությամբ չպակվեց։ Ապրիլի 4-ին Հայաստանում Իրանի ուազմական կցորդը՝ զնդապետ Հոսեփին Շեյխը հրավիրվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն։ Նրան ընդունեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնիյանը։ Հոսեփին Շեյխը շխատատեղ վիրավորների առկայության մասին լուրը և հայտնեց, որ իրանական կողմը դիմել է ինչպես հայկական, այնպես էլ աղքեցանական կողմին՝ առավելագույն ուշադրություն ցուցաբերել նման կարգի պատահարները բացառելու համար։ Հայկական կողմը իր կողմից հայտնեց, որ նշված գյուղը գտնվում է արցախյան ուժերի թիկունքում, և քիչ հավանական է արցախյան կողմից նրա հրետակոծումը։ Հանդիպման ընթացքում նշվել է, որ այս փաստը ավելի շատ նման է սաղրանքի և չի բխում արցախյան կողմի շահերից։ Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել անմիջական շփումները՝ ապատեղեկատվության տարածումը բացառելու համար։ Այդ համատերաստում Արցախյան պաշտպանական բանակը լրացնից պետք է ուսումնասիրեր հրետակոծության փաստը և իրանական կողմին տեղեկացներ արդյունքների մասին։ Այսպիսով, կարող ենք վստահորեն նշել, որ Աղքեցանը մեծապես անհանգստացած է հայ-իրանական հարաբերությունների ներկային մակարդակով։ Հաշվի առնելով Իրանի և Աղքեցանի արմատական ուազմավարական անշրջելի հակասությունները՝ տեսանելի ապագայում Իրանը տարածաշրջանում Աղքեցանի շահերի շրջափակման բնագավառում Հայաստանի ամենաիրատեսական դաշնակիցներից մեկը կարող է դառնալ<sup>9</sup>։

Հայ-Իրանական համագործակցության զարգացումը խթանվում է նաև Հայաստանի ուազմավա-

րական դաշնակից Ուուսաստանի Դաշնության կողմից, քանի որ տարածաշրջանում ձևավորվել է Հայ-Ուուս-Իրանական ընդհանուր շահերի որոշակի միջավայր։ Իրանի զինված ուժերում որոշակի խորհրդային ստանդարտների սպառագինության առկայությունը նախադրյաներ է ստեղծում նաև ուազմական համագործակցության իրական ծրագրերի մշակման համար։ Հաշվի առնելով Իրանի զգալի ազդեցությունը իսլամական աշխարհում՝ Իրանի հետ ուազմաքաղաքական համագործակցությունը կարող է նպաստել նաև իսլամական աշխարհում Հայաստանի նկատմամբ բարենպաստ մքնուրսի ձևավորմանը, ինչը, անշուշտ, մեծ հարգած կարող է հասցնել Աղքեցանի քարոզությանը։ Դեռևս պարզ չէ, թե հայ-իրանական հարաբերությունների վրա ինչ ազդեցություն կունենա 2016 թվականի օգոստոսի 8-ին Բաքվում կայացած Ուուսաստան-Իրան-Աղքեցան նախագահների եռակողմն հանդիպումը։ Նախնական խնդիրները, որոնք քնննարկվել են հանդիպման ընթացքում, առնչվում են համագործակցության հաղորդակցման և տրամսպորտային ոլորտներում։ Չի բացառվում, որ Աղքեցանը կօգտագործի առիթը, և ինչպես Իրանի նախագահ Հասան Ռուսիանի հետ ունեցած հանդիպման ընթացքում, այնպես էլ Ուուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպմանը Աղքեցանի նախագահ Իլհամ Ալիևը կվարի նույն հակահայկական քարոզական քաղաքականությունը։ Ըստ որոշ քաղաքագետների՝ Ուուսաստանը գործընթացի զարգացումը կարծես բոլորում է ներքին հանգուցալուծման և կօգտագործի ապրիլան իրադարձությունները տարածաշրջանում Եվրոպական Տնտեսական Միության ազդեցության մեծացման համար<sup>10</sup>։

Անցած տարիների ընթացքում պաշտոնական թերանի միջուկային ծրագրերի շուրջ սրվել էին Իրանի և միջազգային հանրության միջև հակասությունները։ Եվրամիությունը սկզբնական շրջանում այդ հարցի վերաբերյալ համեմատաբար մեղմ դիրքորոշում ուներ, հետագայում քնննարկում էր իրանական նավթի արտահանման վրա նոր սահմանափակումներ կիրառելու հարցը, ինչը համաձայնեցվել էր Եվրամիության հիմնական պետությունների հետ։ Միաժամանակ, Եվրամիությունը կոչ էր արել ԱՄՆ-ին, Ուուսաստանի Դաշնությանը, Զինաստանին, ճապոնիային և առաջատար տնտեսություններ ունեցող այլ պետություններին միանալ այդ սահմանափակումներին։ Ուուսաստանը այդ նախաձեռնությանը դեմ էր արտահայտվել՝ հայտարարելով, որ նախաձեռնությունը կրում է քաղաքական բնույթը։ Շարունակվում էին նաև իրանական-ամերիկյան և իրանական-իրա-

յելյան լարված հարաբերությունները, իսկ Թեհրանում Սեծ Բրիտանիայի դեսպանատան վրա իրանցի ցուցարարների հարձակումներից հետո սրվել են նաև Իրանի և Սեծ Բրիտանիայի հարաբերությունները<sup>11</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ վերջին տարիների ընթացքում Իրանի միջուկային հարցերի ակտուալացման հետ կապված Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի հեղինակությունը բավականին աճեց, և ներկայում այդ խնդրի վերաբերյալ համաշխարհային համապատասխան կազմակերպությունների և այլ պետությունների հետ բանակցությունների վարման հիմնական գործառույթը երկրի դեկավարությունը դրել է Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի, այլ ոչ թե արտաքին գործերի նախարարության վրա<sup>12</sup>: Նշված խորհրդի կազմում են Իրանի գերագույն հոգևոր առաջնորդը՝ խորհրդի գլուխը, Իրանի նախագահը՝ խորհրդի նախագահը, գերագույն հոգևոր առաջնորդի երկու ներկայացուցիչները, պառլամենտի նախագահը, դատական իշխանության գլուխը, պաշտպանության նախարարը, զինված ուժերի գլխավոր շտարի պետը, արտաքին գործերի նախարարը, ներքին գործերի նախարարը, տեղեկատվության նախարարը, պլանավորման և կառավարման կազմակերպման կոմիտեի նախագահը, ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղարը: Կառուցվածքային առումով այդ կառույցի առանձնահատկությունն այն է, որ դրա շրջանակներում գործում են երկու առանձին ենթախորհուրդներ՝ անվտանգության խորհուրդը և պաշտպանական խորհուրդը:

Հայ-Իրանական ռազմական հարաբերությունների կարևոր միջոցառումներից կարելի է առանձնացնել այն, որ 2011 թվականի մայիսի 3-ին Հայաստանի նախակին պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն ընդունել է Իրանի պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարարի տեղակալ Ռեզա Մողաֆարի Նիային՝ ըննարկելով պաշտպանության ոլորտում հայ-իրանական համագործակցությանը առնչվող հարցերը: 2010 թվականի հուլիսի 17-18-ը պաշտոնական այցով Իրանում էր գտնվում Սեյրան Օհանյանի զինվածքած պատվիրակությունը: Այդ ընթացքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը հանդիպել է Իրանի նախագահ Մահմուտ Ահմադինեժադի, պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարար, բիրգաղի գեներալ Ահմադի Վահիդիի, ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Սայիդ Զալիլիի և արտաքին գործերի նախարար Մանուչեհր Մոթթարքիի հետ: Հանդիպումների ընթաց-

քում քննարկել են միջազգային և տարածաշրջանային անվտանգության ներկա վիճակը և հնարավոր զարգացումները, կարևորվել են առկա խնդիրների խաղաղ, բանակցային ճանապարհով կարգավորումը՝ համագործակցությունը, խաղաղությունը և կայունությունը համարելով կարևոր նախապայման տարածաշրջանի ժողովուրդների բարեկեցության և բարգավաճման համար: Երկու երկրների պաշտպանության նախարարները բարձր են զնահատել հայ-իրանական բարեկամական հարաբերությունները, գոհունակություն են հայտնել քաղաքական երկխոսության ներկա մակարդակից, ընդգծել են, որ նման այցելությունները հնարավորություն են ստեղծում հայ-իրանական հարաբերություններին վերաբերող տարրեր խնդիրներ քննարկելու և փոխահավետ լուծումներ գտնելու համար: Պաշտոնական բոլոր հանդիպումների ընթացքում կողմերը ընդգծել են, որ հազարամյակի պատմության ընթացքում հայ-իրանական համագործակցությունը նպաստում է տարածաշրջանում խաղաղության և կայունության ամրապնդմանը: Վերահստատվել է երկու երկրների դիրքորոշումը այն հարցում, որ անվտանգության և կայունության միջավայրը տարածաշրջանում ապրող ժողովուրդների բարգավաճման և զարգացման ապահովման գրավականն է: Ընդգծվել է Իրանում հայկական համայնքի դերակատարությունը հայ-իրանական բարեկամության ամրապնդման գործում<sup>13</sup>:

2013 թվականի օգոստոսի 4-ին աշխատանքային այցով Իրանում էր գտնվում Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանը, ով մասնակցեց Իրանի նորընտիր նախագահ Հասան Ռոհիանիի երդմանակալության արարողությանը: Նախագահ Սերժ Սարգսյանը նույն օրը երեկոյան մասնակցել է Իրանի նախագահի անունից տրված պաշտոնական ընդունելությանը: Նախագահ Սերժ Սարգսյանը օգոստոսի 5-ին Թեհրանում հանդիպում է ունեցել Իրանի նորընտիր նախագահ Հասան Ռոհիանիի հետ: Հանդիպման սկզբում Հասան Ռոհիանի շնորհակալություն է հայտնել Սերժ Սարգսյանին իրավերը ընդունելու և երդմանակալությանը մասնակցելու համար: Երկու երկրների նախագահները հանդիպմանը քննարկել են ինչպես երկկողման, այնպես էլ բազմակողման հարցերի լայն շրջանակ: Զրուցակիցները անդրադարձել են նաև տարածաշրջանային խնդիրներին, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացին: 2016 թվականի հունիսի 14-17-ը Հայաստանի պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Մովսես Հակոբյանի գլխավորած պատվիրակությունը աշխատանքային այցով գտն-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վում էր Իրանում: Այցի շրջանակներում հայկական պատվիրակությունը հանդիպել է Իրանի պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարարության ԷֆֆԱ կազմակերպության գործադիր տնօրեն Մուհամմեդ Մեհրի Քարքարայիի հետ, այցելել ընկերության գործարաններ, խանութների ցանց և ծանրություն արտադրվող ապրանքի ենսականուն: Մովսես Հակոբյանի գիսավորած պատվիրակությանը ընդունել է Իրանի պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարար Հոսեյն Դեղիանը: Հանդիպման ընթացքում քննարկել են պաշտպանության ոլորտում հայ-իրանական համագործակցության հեռանկարային զարգացմանն առնչվող հարցեր: Մի շարք ոլորտներում պայմանավորվածություններ են ձեռք բերվել համագործակցության զարգացման վերաբերյալ՝ ստորագրելով փոխընդունման հուշագիր:

Թեհրանի հանդեպ միջազգային պատժամիջոցների չեղարկումից հետո Հայաստանը՝ որպես Իրանի դարավոր քարեկամ և հարևան պետություն, լայն հնարավորություններ ունի մի կողմից իր ուրույն դերակատարությունը ունենալու տարածաշրջանային զարգացումներում, մյուս կողմից՝ առավել զարգացնելու հայ-իրանական տնտեսական գործակցությունը: Այս հարցում համակարծիք են ինչպես հայ, այնպես էլ իրանցի պաշտոնյաները և փորձագետները: Հայաստանը ԵԱՏՄ-ի միակ երկիրն է, որը ցամաքային սահման ունի Իրանի հետ և պատրաստ է այդ սահմանը ծառայեցնելու Եվրոպայի և Ասիայի միջև կապ հաստատելու: Իրանը Հայաստանի համար մեծ կարևորություն ներկայացնող տնտեսական գործընկեր է: Արժե է շեն հայ-իրանական տնտեսական համագործակցության կարևոր ձեռքբերումներից մի քանիքը: 2007 թվականի մարտի 19-ին Հայաստանի և Իրանի նախագահների մասնակցությամբ տեղի ունեցավ գաղտարի պաշտոնական բացման հանդիսավոր արարողությունը: Նույն օրը Հայաստանի և Իրանի կառավարությունների միջև ստորագրվեց Արարս գետի վրա հիդրոէլեկտրակայացներ կառուցելու և շահագործելու մասին համաձայնագիրը: Հայ-իրանական էներգետիկ համագործակցության հեռանկարային ծրագրերից են հայ-իրանական քարձավոլություններում և հայ-իրանական նավամբերքի խողովակաշարի կառուցումը: 2007 թվականի հոկտեմբերի 26-ին տեղի ունեցավ Հայաստան-Իրան՝ Կապան-Մելիքի, ճանապարհի բացման արարողությունը: 2008 թվականի նոյեմբերի վերջին ավարտվեցին Իրան-Հայաստան գազատարի երկրորդ հատվածի շինարարական աշխատանքները: Համաձայն Հայաստանի վարած արտաքին ու ազգական քաղաքականության պահանջմանը հայ-իրանական համագործակցության առաջնահերթությունները հետ Իրանի բարդ հարաբերությունները և ուղղակի հակասությունները:

քականության՝ Հայաստանի պաշտպանության նախարարությունը բավականին ակտիվ շփումներ է իրականացնում Իրանի ու ազգաքաղաքական դեկավարության հետ: Հարաբերությունների աշխատացման շահագրգիռ կողմից դերում հաճախ հանդիս է գալիս Իրանը<sup>17</sup>: Հայ-իրանական ու ազգաքաղաքական հարաբերություններում պարբերաբար զգալի տեղաշարժեր են արձանագրվում: Կազմակերպվում և անցկացվում են զինվորական տարրեր մակարդակների պատվիրակությունների փոխայցելություններ, որոնց ժամանակ հստակեցվում են հայ-իրանական ու ազգական և ուղղագրադարձական հարաբերությունների զարգացման հեռանկարները, տարածաշրջանային անվտանգության խնդիրների նկատմամբ երկու երկրների դիրքորոշումները: Հայ-իրանական ու ազգական և ուղղագրադարձական համագործակցության հենարավոր բոլոր շրջանակների լիարժեք բացահայտումը և զնահատումը հնարավորություն կտան հայ-իրանական ու ազգաքաղաքական դեկավարություններին առավել արդյունավետ գործունեություն ծավալել Իրանի հետ հարաբերություններում: Հայ-իրանական ու ազգական և ուղղագրադարձական հարաբերություններում անցկացվում են լիարժեք ուղղական և ուղղագրադարձական հարաբերությունների զարգացման համար առկա են որոշակի խոչընդոտներ: Իրանի տնտեսական և քաղաքական հարաբերություններում ադրբեջանցիների զգալի ազդեցությունը և կրոնական որոշ շրջանակներում ծայրահեղական գաղափարախոսությունը որոշակի վերապահումներ է առաջ բերում Իրանի կողմից, իսկ Հայաստանի կողմից՝ արտաքին ուղղական քաղաքականության առաջնահերթություններում ընդգրկված գործընկեր պետությունների հետ Իրանի բարդ հարաբերությունները և ուղղակի հակասությունները:

<sup>1</sup> Տե՛ս [www.mfa.am/hy/](http://www.mfa.am/hy/)<sup>2</sup> Տե՛ս «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական քանակ» ռազմագիտական հանդես հասուլ թողարկում, 2007թ., էջեր 41-42:<sup>3</sup> Տե՛ս «Հայ-իրանական հարաբերությունները ամուր և կայուն են» ԻԻՀ նախագահ: «Նովոստի Արմենիա» 22.10.2007թ. (<http://ar.newsarmenia.ru/arm1/20071022/4175612.html>):<sup>4</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության՝ Դ.Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ», Հասոր 2, Երևան 2014թ., էջ 89:<sup>5</sup> Տե՛ս Տիգրան Տոնիկի Քոչարյան. «Ազգային անվտանգության վերաբերյալ դասընթաց» Երևան 2013թ., էջ 177:<sup>6</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ Դ.Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ», Հասոր 2, Երևան 2014թ., էջ 91:<sup>7</sup> Տե՛ս Ակոպյան Բ., Իրան և Հայաստան 3+3 դրույթություն, Տրетий взгляд, 05.06.2003թ., ստոր 39.<sup>8</sup> Տե՛ս John New House “Iraq, Iran and Turkey” Policy brief, World Security Institute, December 2002 page 7.<sup>9</sup> Տե՛ս Տիգրան Տոնիկի Քոչարյան. «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան 2012թ., էջ 334:<sup>10</sup> Տե՛ս Արմենապետ: Հայկական լրատվական գործակալություն (<http://www.armenpress.am/arm/news/856388/alievy-putini-ev-rouhaniimot-araj-khani-ir-qarozchutyun.html>)<sup>11</sup> Տե՛ս Մուրադյան Ի., “Региональная политика США и Великобритании, Турция-Иран-Южный Кавказ-Черное море,, Ер., АНТАРЕС, 2008, стр 127-130.<sup>12</sup> Տե՛ս Ռոզով Ա.Ա. О Высшем Совете национальной безопасности Ирана//Сайт Института Ближнего Востока, 2006г, стр 48.<sup>13</sup> Տե՛ս Տիգրան Տոնիկի Քոչարյան. «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան 2012թ., էջ 335:<sup>14</sup> Տե՛ս [www.mil.am/old-1299195327/page/43](http://www.mil.am/old-1299195327/page/43)<sup>15</sup> Տե՛ս [www.president.am/hy/foreign-visits/item/2013/08/04/Working-visit-of-President-Serzh-Sargsyan-to-Iran](http://www.president.am/hy/foreign-visits/item/2013/08/04/Working-visit-of-President-Serzh-Sargsyan-to-Iran)<sup>16</sup> Տե՛ս «Հայ Զինվոր» շաբաթաթերթ #23(1143) (<http://www.hayzinvor.am>)<sup>17</sup> Տե՛ս Տիգրան Տոնիկի Քոչարյան. «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան 2012թ., էջ 336:<sup>18</sup> Տե՛ս Ակոպյան Բ., Իրան և Հայաստան 3+3 դրույթություն, Տրетий взгляд, 05.06.2003թ., ստոր 48.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ Դ.Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ», Հասոր 2, Երևան, 2014թ.::
2. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն: «Հայկական քանակ» ռազմագիտական հանդես, հասուլ թողարկում, 2007թ.:
3. «Հայ-իրանական հարաբերությունները ամուր և կայուն են» ԻԻՀ նախագահ: «Նովոստի Արմենիա» 22.10.2007թ. (<http://ar.newsarmenia.ru/arm1/20071022/4175612.html>):
4. Արմենապետ: Հայկական լրատվական գործակալություն (<http://www.armenpress.am/arm/news/856388/alievy-putini-ev-rouhaniimot-araj-khani-ir-qarozchutyun.html>)
5. «Հայ Զինվոր» շաբաթաթերթ #23(1143) (<http://www.hayzinvor.am>)
6. Տիգրան Տոնիկի Քոչարյան. «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան, 2012թ.:
7. Տիգրան Տոնիկի Քոչարյան. «Ազգային անվտանգության վերաբերյալ» դասընթաց Երևան, 2013թ.:
8. Ակոպյան Բ., Իրան և Հայաստան 3+3 դրույթություն, Տրетий взгляд, 05.06.2003թ.
9. Մուրադյան Ի., “Региональная политика США и Великобритании, Турция-Иран-Южный Кавказ-Черное море, Ер., АНТАРЕС, 2008.
10. Ռոզով Ա.Ա., О Высшем Совете национальной безопасности Ирана//Сайт Института Ближнего Востока 2006г.
11. John New House “Iraq, Iran and Turkey” Policy brief, World Security Institute, December 2002.
12. [www.mfa.am](http://www.mfa.am)
13. [www.mil.am](http://www.mil.am)
14. [www.president.am](http://www.president.am)

Анжела Мнацаканян

Младший специалист управления кадров и военного образования МО РА,  
младший служащий 1-ого класса.Магистр кафедры международных отношений и дипломатии,  
отделения международных отношений,  
факультета международных отношений ЕГУ

## РЕЗЮМЕ

*Армения-Иран: краткий анализ военных отношений*

Отношения Армении с Исламской Республикой Иран важны с точки зрения сохранения в регионе политической стабильности. Обладающий большим экономическим, военным, культурным потенциалом Иран является одним из государств, играющих важную роль в формировании военно-политической обстановки в регионе. Армения придает важность вовлеченности Ирана в разрешение южнокавказских проблем, считая это обстоятельство как один из факторов сохранения стабильности на Южном Кавказе. Иран является государством, граничащим с Нагорным Карабахом, и в процессах по урегулированию Карабахской проблемы проводит сбалансированную политику. Кроме того, существующее в Иране традиционно благожелательное отношение к армянской общинае создает дополнительные благоприятные условия для развития армяно-иранских межгосударственных отношений. Армения, находясь на линии соприкосновения христианского и мусульманского миров, может сыграть роль в смягчении напряженности в отношениях Иран-Запад, тем самым давая пример диалогов и сосуществования цивилизаций.

**Ключевые слова:** *содружество, военно-политический, ядерная программа, санкция, община, Карабахский конфликт, меморандум, Министерство обороны, бомбардировка, информирование, транспортная блокада.*

Anzhela Mnatsakanyan

First class junior serviceman of Personnel and Military Education

Department of the Ministry of Defence of the Republic of Armenia.

Master of the Chair of International Relations and Diplomacy, Department of  
International Relations, Faculty of International Relations of YSU.

## SUMMARY

*Armenia-Iran military relations in brief analysis*

Armenia's relations with the Islamic Republic of Iran are important in terms of maintaining political and economic stability in the region. With its huge economic, military and cultural potential, Iran is one of the important players in the formation of the military-political situation in the region. Armenia attaches importance to the involvement of Iran in finding solutions to the problems of the South Caucasus and regards it as one of the factors for maintaining stability in the South Caucasus. Iran is a state that borders Nagorno-Karabakh and maintains a balanced policy in the process of resolving the Nagorno-Karabakh problem. Besides that, the traditionally existing positive attitude towards the Armenian community in Iran creates yet another favorable condition for the development of inter-state relations between Armenia and Iran. Standing on the crossroads of Christian and Islamic civilizations, Armenia can play a role in mitigating tensions between Iran and the West by demonstrating an example of co-existence and tolerance.

**Keywords:** *commonwealth, political-military, nuclear program, sanction, community, the Karabakh conflict, memorandum, Ministry of Defence, bombardment, informing, transport blockade.*